**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**
**«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

**0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,**


---

**06 դեկտեմբեր 2021թ.**

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահին**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 65-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Վարչական իրավախախտումներ վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության որոշումը,

բ) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Արամ Վարդևանյան),

գ) նախագծի ընդունման հիմնավորումը,

դ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը,

Առաջարկում ենք ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**

**ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

06.12.2021թ.

# ՈՐՈՇՈՒՄ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով և 65-րդ հոդվածի 1-րդ մասով՝ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունը

**Որոշեց՝**

1. ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել «Վարչական իրավախախտումներ վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:
2. Նախագծի հիմնական զեկուցող նշանակել ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արամ Վարդևանյանին:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ՀԱՅԱՍՏԱՆ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 23-րդ հոդվածում 1.1 և 4.1 կետերը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 2.** Օրենսգրքի 24-րդ հոդվածից հանել «Տուգանային միավորը,» բառերը:

**Հոդված 3.** Օրենսգրքի 25.1 հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 4.** Օրենսգրքի 28.1 հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 5.** Օրենսգրքի 32-րդ հոդվածի երրորդ պարբերությունից հանել «Տուգանային միավորների ձևով նշանակվող վարչական տույժը կիրառվում է սույն մասում նշված անձանց նկատմամբ, եթե նրանք ունեն տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք:» նախադասությունը:

**Հոդված 6**. Օրենսգրքի $123^3$ հոդվածում «չափով» բառից հետո հանել «,տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերը:

**Հոդված 7**. Օրենսգրքի $123^5$ հոդվածում՝

1) առաջին մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր» բառերը,
2) 1.1 մասում՝ «չափով» բառից հետո հանել «,տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր» բառերը,
3) 16-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «և տուգանային միավորի կիրառում՝ երկու միավոր» բառերը:

**Հոդված 8.** Օրենսգրքի 124-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:» բառերը,
2) 5-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:» բառերը,
3) 6-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:» բառերը,
4) 8-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:» բառերը,
5) 9-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:» բառերը,
6) 11-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:» բառերը,

7) 14-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝3 միավոր:» բառերը,
8) 17-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:» բառերը,
9) 18-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր:» բառերը,
10) 21-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:» բառերը,
11) 22-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:» բառերը,
12) 23-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:» բառերը,
13) 26-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:» բառերը:

**Հոդված 9.** Օրենսգրքի 124.3 հոդվածում ՝«չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:» բառերը:

**Հոդված 10.** Օրենսգրքի 124.4 հոդվածում՝
1) 2-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:» բառերը,
2) 3-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր:» բառերը,
3) 4-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 4 միավոր:» բառերը:

**Հոդված 11.** Օրենսգրքի $124^6$ հոդվածում՝«չափով» բառից հետո հանել «տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:» բառերը:

**Հոդված 12.** Օրենսգրքի 129.3 հոդվածում ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 13.** Օրենսգրքի 135.2 հոդվածում՝
1) 1-ին մասում՝ «չափով» բառից հետո հանել «և տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:» բառերը,
2) 2-րդ մասում՝ «չափով» բառից հետո հանել «իսկ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ՝ նաև տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:» բառերը:

**Հոդված 14.** Օրենսգրքի 25.1 Գլուխը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 15.** Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում՝«129.2,» թվից հետո հանել «129.3» թիվը:

**Հոդված 16.** Օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «129.2-րդ,» թվից հետո հանել «129.3-րդ,» թիվը:

**Հոդված 17.** Օրենսգրքի 290-րդ հոդվածում «25» թվից հետո հանել «28.1» թիվը:

**Հոդված 18.** Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասում`«129.2,» թվից հետո հանել «129.3» թիվը:

**Հոդված 19.** Օրենսգրքի 314-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «զրկելու» բառից հետո հանել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերը.

2) 1-ին մասը «զրկելու» բառից հետո հանել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերը:

**Հոդված 20.** Օրենսգրքի 315-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «զրկելու» բառից հետո հանել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերը.

2) 5-րդ մասից հանել «Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու և» բառերը:

**Հոդված 21.** Օրենսգրքի 317-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 22.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

# ՏԵՂԵԿԱՆՔ
# ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 23. Վարչական տույժերի տեսակները

Վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող են կիրառվել հետևյալ վարչական տույժերը՝

1) նախազգուշացում.

2) տուգանք.

Deleted: 1.1) տուգանային միավոր.¶

3) վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հատուցմամբ վերցնում.

4) վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում.

5) հատուկ իրավունքից զրկում.

Deleted: 4.1) տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում.¶

6) *(կետն ուժը կորցրել է 16.12.05 ՀՕ-32-Ն)*

7) *(կետն ուժը կորցրել է 16.12.05 ՀՕ-32-Ն)*

8) տնտեսական գործունեության կասեցում:

*(մասն ուժը կորցրել է 16.12.05 ՀՕ-32-Ն)*

ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով կարող են սահմանվել, բացի սույն հոդվածում նշվածներից, նաև վարչական տույժերի այլ տեսակներ՝ վարչական իրավախախտումների մասին ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների օրենսդրության հիմունքների սկզբունքներին և ընդհանուր դրույթներին համապատասխան:

ԽՍՀՄ օրենսդրությամբ կարող է նախատեսվել օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչական վտարում ԽՍՀՄ սահմաններից՝ խորհրդային իրավակարգը կոպիտ խախտող վարչական իրավախախտումներ կատարելու համար:

Հոդված 24. Հիմնական և լրացուցիչ վարչական տույժեր

Առարկաները հատուցմամբ վերցնելը և բռնագրավումը կարող են կիրառվել ինչպես իբրև հիմնական, այնպես էլ իբրև լրացուցիչ վարչական տույժեր. սույն օրենսգրքի 23 հոդվածի առաջին մասում թվարկված մյուս վարչական տույժերը կարող են կիրառվել միայն որպես հիմնական տույժեր:

Deleted: Տուգանային միավորը,

Մեկ վարչական իրավախախտման համար կարող է նշանակվել հիմնական կամ հիմնական ու լրացուցիչ տույժ:

Deleted: Հոդված 25.1. [... [1]]

Deleted: Հոդված 28.1. [... [2]]

Հոդված 32. Վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու ընդհանուր կանոնները

Վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, վարչական իրավախախտումների մասին ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների օրենսդրության հիմունքներին, սույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա սույն օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը (լիզինգի իրավունքի պետական գրանցման դեպքում՝ լիզինգառուն) (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը) կամ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքով նախատեսված՝ տրանսպորտային միջոցի շահագործող հանդիսացող անձը, եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ: Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

Deleted: Տուգանային միավորների ձևով նշանակվող վարչական տույժը կիրառվում է սույն մասում նշված անձանց նկատմամբ, եթե նրանք ունեն տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք:¶

Սույն օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները սահմանվում են «Ավտոտրանսպորտային միջոցների

օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված $123^{3}$. Տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցները վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը

*(վերնագիրը խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն)*

1. Օրենքով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցներ վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր

Հոդված $123^{5}$. Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշի օգտագործման կանոնները խախտելը

1. Անընթեռնելի կամ ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր

1.1. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի առնվազն մեկ նիշը փակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր

2. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը սահմանված տեղում չփակցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

3. Ժամանակավոր համարանիշի օգտագործման ժամկետը լրանալուց հետո տրանսպորտային միջոցը այդ համարանիշերով վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

4. Առանց հաշվառման համարանիշի, կեղծված կամ փոխարինված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.1. *(մասն ուժը կորցրել է 09.12.19 ՀՕ-300-Ն)*

4.2. *(մասն ուժը կորցրել է 09.12.19 ՀՕ-300-Ն)*

5. Տրանսպորտային միջոցը տնօրինողի կողմից հաշվառման համարանիշն այլ անձի հանձնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

6. Ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված դեպքերում հետնապատին հաշվառման համարանիշի թվերի և տառերի կրկնօրինակում չունեցող տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

7. Դեղին հիմնագույնի հաշվառման համարանիշերը ուղևորափոխադրումների իրականացման երթուղին սպասարկելու ժամկետի ավարտից հետո չվերադարձնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կազմակերպության պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

8. Հայաստանի Հանրապետության տարածքում կանոնավոր ուղևորափոխադրումներ (բացառությամբ միջպետականի) իրականացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սպասարկվող երթուղում սպիտակ հիմնագույնի հաշվառման համարանիշ ունեցող տրանսպորտային միջոցների շահագործումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

9. Հայաստանի Հանրապետության տարածքում առանց սահմանված տեղում փակցված ներդիրի թեթև մարդատար ավտոմոբիլներով տաքսամոտորային ուղևորափոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

10. Դեղին հիմնագույնի հաշվառման համարանիշը այլ տրանսպորտային միջոցի վրա տեղադրելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

11. Անընթեռնելի հաշվառման համարանիշ է այն համարանիշը, որի թեկուզ մեկ նիշը ցերեկը, պարզ եղանակին գունաթափման կամ այլ պատճառներով, բացառությամբ առնվազն մեկ նիշը փակելու դեպքերի, անշարժ տրանսպորտային միջոցի վրա տեղադրված վիճակում տեսանելի չէ 40 մետր հեռավորությունից:

12. Տրանսպորտային միջոցի համարանիշը համարվում է սահմանված տեղում չփակցված, եթե համարանիշն ընթեռնելի է ինչպես շարժման ընթացքում, այնպես էլ կանգնած վիճակում, սակայն համարանիշը (զույգ համարանիշերի դեպքում՝ թեկուզ և մեկը) ամրացված չէ դրա համար նախատեսված տեղում:

13. Տրանսպորտային միջոցը համարվում է առանց համարանիշի, եթե այդ համարանիշը (զույգ համարանիշերի դեպքում՝ երկուսն էլ) ամրացված չէ դրա համար նախատեսված տեղում և ընթեռնելի չէ ինչպես շարժման ընթացքում, այնպես էլ կանգնած ժամանակ:

13.1. Տրանսպորտային միջոցը զույգ հաշվառման համարանիշեր ունենալու դեպքում համարվում է մեկ հաշվառման համարանիշով, եթե համարանիշերից մեկը ամրացված չէ դրա համար նախատեսված տեղում և ընթեռնելի չէ ինչպես շարժման ընթացքում, այնպես էլ կանգնած ժամանակ:

14. Առանց ներդիրի, կեղծված, չգործող կամ այլ տրանսպորտային միջոցի համար տրված ներդիրով Հայաստանի Հանրապետության տարածքում թեթև մարդատար ավտոմոբիլներով տաքսամոտորային ուղևորափոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

15. Տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կողմից ներդիրն այլ անձի հանձնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

16. Զույգ հաշվառման համարանիշեր ունեցող տրանսպորտային միջոցը մեկ հաշվառման համարանիշով վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

**Deleted:** և տուգանային միավորի կիրառում՝ երկու միավոր

17. Սույն հոդվածի 16-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով:

Հոդված 124. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը

*(վերնագիրը խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն)*

1. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

2. Տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումների պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

**Deleted:** տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր

3. Երթևեկության առավելություն ունեցող մասնակցին ճանապարհը չզիջելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

4. Կարմիր և (կամ) կապույտ լուսային ազդանշանով առկայծող փարոսիկներ միացրած և միաժամանակ հատուկ ձայնային ազդանշաններ արձակող տրանսպորտային միջոցին ճանապարհը չզիջելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

5. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից խաչմերուկների անցման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

**Deleted:** տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր

6. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հետիոտնային անցումների հատման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

**Deleted:** տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր

7. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերի անցման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

8. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից վազանցի կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով;

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր

9. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկությունն սկսելու կամ մանևր կատարելու, ինչպես նաև հետընթաց վարման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով;

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր

10. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից մարդկանց փոխադրման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

11. Տրանսպորտային միջոցների վարորդների (բացառությամբ ծառայողական առաջադրանքներ կատարող, օպերատիվ ծառայությունների տրանսպորտային միջոցների վարորդների) կողմից թեկուզ մեկ ձեռքի օգտագործմամբ ընթացքի ժամանակ ռադիոկապից և (կամ) հեռախոսակապից օգտվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով;

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր

12. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից արտաքին լուսային սարքերից օգտվելու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

13. Ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցի հեռահար լույսը մոտակայի չփոխարկելը կամ արգելված դեպքերում հեռահար լույսերով տրանսպորտային միջոցը վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

14. Տրանսպորտային միջոցը միակողմանի երթևեկությամբ ճանապարհով տրանսպորտային միջոցների հոսքին հակառակ ուղղությամբ (այդ թվում՝ հետընթաց) վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով;

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր

15. Տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցը դռները բաց վիճակում վարելը, ընթացքի ժամանակ տրանսպորտային միջոցի դռները բացելը կամ կանգնած տրանսպորտային միջոցի դռները բացելը, եթե դա խոչընդոտում է երթևեկության մյուս մասնակիցներին՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

16. Քարշակող տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցների քարշակման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

17. Ճանապարհի բաժանարար գոտին չնախատեսված վայրերում տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հատելը ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու եղանակով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով;

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր

18. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալը, եթե դա կապված չէ վազանցը թույլատրված տեղերում վազանց կատարելու կամ կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը շրջանցելու հետ, և եթե առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու անհնար է շրջանցել կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով;

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր

19. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ձայնային ազդանշանի կիրառման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

20. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ուսումնական վարման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

21. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով;

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր

22. Տրանսպորտային միջոցների կայանումը, եթե դրա հետևանքով այլ տրանսպորտային միջոցների վարորդները ստիպված են եղել կանգ առնել կամ փոխել երթևեկության ուղղությունը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով։

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր

23. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը, եթե դրա պատճառով տրանսպորտային միջոցը տարհանվել է պահպանվող հատուկ տարածք կամ «Հաշմանդամներ» ճանապարհային նշանով (ցուցանակով) կահավորված վայրում «Հաշմանդամ» ճանաչման նշանով չկահավորված տրանսպորտային միջոցը կանգնեցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով։

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր

24. Ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի կետերի տարածքից դուրս կանգառ կատարելը, ինչպես նաև ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում կայանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով։

25. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից (բացառությամբ ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վարորդների) ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում կանգառ կատարելը կամ կայանելը կամ երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ կայանելը (բացառությամբ օրենսդրությամբ թույլատրված դեպքերի)՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով։

26. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով։

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր

27. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից մայթերին կայանելը կամ մայթերով երթևեկելը, բացառությամբ ճանապարհային նշաններով թույլատրված դեպքերի, ինչպես նաև ստորգետնյա կամ վերգետնյա հետիոտնային անցումներով երթևեկելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով։

28. Ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների կամ բեռնատար ավտոմոբիլների վարորդների կողմից ճանապարհի տվյալ ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտիների առկայության դեպքում ձախ եզրային գոտիով երթևեկելը, բացառությամբ օրենսդրությամբ թույլատրված դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով։

29. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից վթարային ազդանշանի կամ «վթարային կանգառ» ճանաչման նշանի կիրառման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով։

30. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից բեռների փոխադրման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով։

31. Տրանսպորտային միջոցը կանգնեցնելու մասին ոստիկանության ծառայողի՝ օրենքով սահմանված կարգով տրված պահանջը վարորդների կողմից դիտավորյալ չկատարելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։

32. *(մասն ուժը կորցրել է 09.12.19 ՀՕ-300-Ն)*

33. Սույն օրենսգրքում ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց ասելով պետք է հասկանալ այն տրանսպորտային միջոցները, որոնք սահմանված կարգով տվյալ պահին իրականացնում են ուղևորների կանոնավոր փոխադրում։

34. Եթե սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 12-րդ, 13-րդ, 19-րդ, 21-րդ, 25-րդ (միայն կանգառ կատարելու մասով) կամ 30-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումը, սույն հոդվածին համապատասխան, ունի նվազ նշանակություն, ապա անձը համարվում է նախազգուշացված, և լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) վարչական պատասխանատվության միջոց չի կիրառում։

35. Տրանսպորտային միջոցների համընթաց հոսքերն իրարից բաժանող «Հոծ գիծ» գծանշման պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի առջևի երկու անիվներն ամբողջությամբ չեն հատել գծանշումը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով։

36. Ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ

իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

37. «Կանգ-գիծ» գծանշման պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի անիվներից ոչ մեկն ամբողջությամբ չի հատել գծանշումը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

38. Սույն հոդվածի 5-րդ, 7-րդ, 9-րդ, 12-րդ, 13-րդ, 19-րդ կամ 30-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

39. Սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

### Հոդված 124.3. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը

1. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քանհինգապատիկի չափով:

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր

### Հոդված 124.4. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից սահմանված արագությունը գերազանցելը

1. Երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:

2. Երթևեկության սահմանված արագությունը 11-30 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր

3. Երթևեկության սահմանված արագությունը 31-50 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր

4. Երթևեկության սահմանված արագությունը 51-80 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 4 միավոր

5. Երթևեկության սահմանված արագությունը 81 կմ/ժ և ավելի գերազանցելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

6. Սույն հոդվածի առաջինից հինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելիս որոշում կայացնող մարմինը (պաշտոնատար անձը) արագաչափ սարքի արձանագրած ցուցանիշից պարտավոր է հանել 10 կմ/ժ՝ արագաչափ սարքի հնարավոր սխալանքի համար:

### Հոդված $124^{6}$. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելը, որի հետևանքով առաջացել է վթարային իրադրություն կամ ճանապարհատրանսպորտային պատահար, պատահարի մասնակից վարորդի կողմից պարտականությունները չկատարելը

*(վերնագիրը խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն)*

1. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելը, որի հետևանքով առաջացել է վթարային իրադրություն՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Deleted: տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր

2. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները չկատարելը կամ խախտելը կամ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը, որի հետևանքով առաջացած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով անձի առողջությանը պատճառվել է թեթև վնաս՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգնապատիկի չափով:

3. Ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդի՝ օրենքով սահմանված պարտականությունները չկատարելը, եթե դա չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

Deleted: Հոդված 129.3 ... [3]

Հոդված 135.2. Տրանսպորտային միջոցներում ծխախոտային արտադրատեսակներ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը

*(վերնագիրը խմբ. 13.02.20 <Օ-96-Ն)*

1. Տրանսպորտային միջոցի (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների) վարորդի կողմից տրանսպորտային միջոցի ընթացքի ժամանակ ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով,

Deleted: և տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներում կամ թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլներում ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով;

Deleted: իսկ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ՝ նաև տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր

Հոդված 224. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը

*(վերնագիրը խմբ. 07.02.12 <Օ-2-Ն)*

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 44.1, 44.2, 47.14, 53, 95, 110.1, 110.2, 111, 123-123.4 (բացառությամբ 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7, 124-124.4, 124.6, 125-126, 128, 129.2, 131, 132, 134, 135.1, 135.2, 139, 140, 153, 160, 169.23, 172.2, 173, 173.2, 175, 177, 178, 178.1, 179.1, 180 (բացառությամբ հինգերորդ և վեցերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 181, 182.3, 182.4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-8-րդ, 9-րդ (բացառությամբ պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի և սահմանապահ զորքերի զինծառայողների (աշխատակիցների) կողմից մեկուսացման կանոնների խախտման վերաբերյալ իրավախախտումների) և 10-րդ մասերով, 182.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-10-րդ (բացառությամբ սույն օրենսգրքի 223.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների), 12-14-րդ մասերով, 183, 184, 186 (եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ծերբակալվածներին պահելու վայրերում), 189.8, 190-193, 195.1-196, 199, 200 և 201-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Deleted: 129.3

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով սահմանված պաշտոնատար անձինք:

Հոդված 287. Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման գանգատարկման (բողոքարկման) կարգը

*(վերնագիրը խմբ. 23.10.19 <Օ-206-Ն)*

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է գանգատարկվել (բողոքարկվել) սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Վարչական ակտը չի կարող գանգատարկվել (բողոքարկվել) վարչական կարգով, եթե նույն վարչական ակտը վիճարկվել է դատական կարգով, իսկ եթե վարչական ակտի դեմ ներկայացված գանգատը (բողոքը) ընդունվել է վարույթ դատական կարգով վարչական ակտի վիճարկումից առաջ, ապա այդ դեպքում վարչական մարմնի հարուցած վարույթը ենթակա է կարճման:

2. Սույն օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ (բացառությամբ 8-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ, 128-րդ, 129.2-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ և 140-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկվելուց (բողոքարկվելուց) հետո:

Deleted: 129.3-րդ

3. Որոշումը վարչական կարգով գանգատարկվում է (բողոքարկվում է) վարչական ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմին:

Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնվել է էլեկտրոնային փոստով, ապա այդ որոշումը կարող է բողոքարկվել նաև նույն էլեկտրոնային փոստով՝ բողոքն ստանալու մասին էլեկտրոնային ծանուցմամբ:

Հոդված 290. Որոշման կատարման կասեցումը գանգատ տալու կամ բողոք բերելու կապակցությամբ

Սահմանված ժամկետում գանգատ տալը կասեցնում է վարչական տույժ նշանակելու որոշման կատարումը մինչև գանգատը քննելը, բացառությամբ սույն օրենսգրքի 25, և 29, 31.1-ին հոդվածներով նախատեսված տույժի միջոցները կիրառելու մասին որոշումների, ինչպես նաև վարչական իրավախախտում կատարելու տեղում գանձվող տուգանք նշանակելու դեպքերում:

Deleted: 28.1

Դատախազի կողմից բողոք բերելը կասեցնում է որոշման կատարումը մինչև բողոքը քննելը:

Հոդված 302. Վարչական տույժեր նշանակելու մասին որոշումների կատարման վաղեմությունը

Վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կատարման ենթակա չէ, եթե այն ի կատար չի ածվել կայացման օրվանից երեք ամսվա ընթացքում, բացառությամբ 123, $123^{1}$, $123^{2}$, $123^{3}$, $123^{4}$, $123^{5}$, 123.6, 123.7, 124, $124^{1}$, $124^{2}$, $124^{3}$, $124^{4}$, $124^{5}$, $124^{6}$, 125, 126, 128, 129, $129^{2}$, 131, 132, 133, 140, 158 հոդվածի երկրորդ, երրորդ և քսանմեկերորդ մասերի, 182, 188, 189.13, 189.14, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների կապակցությամբ կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշումների, որոնց դեպքում վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կատարման ենթակա չէ, եթե այն ի կատար չի ածվել կայացման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Սույն օրենսգրքի 290 հոդվածին համապատասխան որոշման կատարումը կասեցվելու դեպքում վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև գանգատը կամ բողոքը քննվելը: Սույն օրենսգրքի 300 հոդվածին համապատասխան որոշման կատարումը հետաձգելու դեպքում վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև հետաձգման ժամկետի լրանալը:

Deleted: 129.3

ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վարչական իրավախախտումների առանձին տեսակների մասին գործերի որոշումների կատարման համար կարող են սահմանվել այլ ավելի տևական ժամկետներ:

Deleted: ԳԼՈՒԽ 25.1¶
*(գլուխը լրաց. 09.12.19 ՀՕ-300-Ն)*¶
¶
ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ¶
¶
Հոդված 304.1. ... [4]

Հոդված 314. Հատուկ իրավունքից զրկելու մասին որոշումը կատարող մարմինները
*(վերնագիրը լրաց. 09.12.19 ՀՕ-300-Ն)*

Deleted: , ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու

Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու մասին որոշումն ի կատար են ածում ոստիկանության այն պաշտոնատար անձինք, որոնք նշված են սույն օրենսգրքի 224 հոդվածի 2-րդ մասում:

Deleted: , ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու

Փոքրաչափս նավեր վարելու իրավունքից զրկելու մասին որոշումն ի կատար է ածվում սույն օրենսգրքի 228 հոդվածում նշված պաշտոնատար անձանց կողմից:

Որսի իրավունքից զրկելու մասին որոշումն ի կատար են ածում որսի կանոնների պահպանության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող մարմինների այն պաշտոնատար անձինք, որոնք նշված են սույն օրենսգրքի 242 հոդվածի երկրորդ մասում:

Հոդված 315. Տրանսպորտային միջոցներ կամ փոքրաչափս նավեր վարելու իրավունքից զրկելու, որոշումը կատարելու կարգը
*(վերնագիրը լրաց. 09.12.19 ՀՕ-300-Ն)*

Deleted: ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու մասին

Փոքրաչափս նավեր վարելու իրավունքից զրկելու մասին որոշումն ի կատար է ածվում վարորդական վկայականը և նրան կից կտրոնը վերցնելու միջոցով, եթե նավավարը զրկված է բոլոր տեսակի փոքրաչափս նավեր վարելու իրավունքից:

Եթե նավավարը զրկված է ոչ բոլոր տեսակի փոքրաչափս նավեր վարելու իրավունքից, ապա վարորդական վկայականում և դրան կից կտրոնում նշվում է, թե փոքրաչափս նավերի ինչպիսի տեսակներ վարելու իրավունքից է նա զրկված:

Եթե վարելու իրավունքից զրկված նավավարը խուսափում է վարորդական վկայականը հանձնելուց, այդ վկայականը վերցվում է սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության պետլեռտեխհսկողության փոքրաչափս նավերի պետական տեսչության կողմից:

Փոքրաչափս նավեր վարելու իրավունքի վկայականները վերցնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետլեռտեխհսկողության փոքրաչափս նավերի պետական տեսչությունը:

Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու մասին որոշումներն ի կատար են ածվում վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանում կասեցման և զրկման մասին տեղեկատվությունը մուտքագրելու միջոցով:

Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու մասին տեղեկատվությունը, վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանում մուտքագրելուն զուգահեռ, միջոցներ են ձեռնարկվում վարորդական վկայականը և նրան կից կտրոնը վերցնելու համար, եթե վարորդը զրկված է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից:

**Deleted:** Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու և

**Deleted:** ¶
Հոդված 317. ... [5]

**Deleted:** *(վերնագիրը փոփ. 09.12.19 ՀՕ-300-Ն)¶*
*¶*
*(մասն ուժը կորցրել է 09.12.19 ՀՕ-300-Ն)¶*
Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետի առնվազն կեսն անցնելուց հետո անձն իր ցանկությամբ կարող է հանձնել վարորդական վկայական ստանալու տեսական քննություն: Տեսական քննությունը դրական հանձնելու դեպքում անձի՝ տրանսպորտային միջոցներ վարելու կասեցված իրավունքը վերականգնվում է:¶

| Page 4: [1] Deleted | User68 | 12/1/2021 10:38:00 AM |
|---|---|---|

Հոդված 25.1. Տուգանային միավորը

1. Տուգանային միավորները կիրառվում են ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ կատարած անձանց նկատմամբ՝ սույն օրենսգրքի հատուկ մասով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

2. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձին Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վարորդական վկայական ստանալու օրվանից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետն ավարտվելու օրվանից) մեկ տարի ժամկետով տրվում է 9 միավոր: Այլ պետությունում ստացած վարորդական վկայական ունեցող և բնակչության պետական ռեգիստրում հաշվառված օտարերկրացուն միավորները տրվում են բնակչության պետական ռեգիստրում հաշվառվելու օրվանից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետն ավարտվելու օրվանից): Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձին յուրաքանչյուր հաջորդ մեկ տարի ժամանակահատվածի համար տրվում է 9 միավոր, և նախորդ տարվա միավորների մնացորդը չի փոխանցվում հաջորդ տարի:

3. Ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտում ամրագրելու դեպքում վարչական իրավախախտում կատարած անձին տվյալ տարում (մեկ տարի ժամանակահատվածում) տրված ընդհանուր միավորներից ինքնաշխատ եղանակով հանվում են սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված իրավախախտման համար սահմանված տուգանային միավորները:

4. Տուգանային միավոր նախատեսող վարչական տույժ նշանակելու մասին որոշման գանգատարկումը չի կարող կանխել դրա իրավական հետևանքների վրա հասնելը տվյալ տարում կատարված և սույն օրենսգրքի 129.3-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների համար, եթե վարչական տույժ նշանակելու մասին որոշումը զանգատի քննության արդյունքում ուժի մեջ է մտել հաջորդող տարվա ընթացքում:

5. Այն դեպքում, եթե սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված իրավախախտման համար հանվող միավորները գերազանցում են անձին տրված միավորների մնացորդը, ապա տուգանային միավորները հանվում են այդ մնացորդի չափով՝ անկախ տվյալ իրավախախտման համար սահմանված տուգանային միավորների չափից:

6. Սույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար որպես վարչական պատասխանատվության միջոց կիրառվում է 0.5, 1, 2, 3 կամ 4 տուգանային միավոր:

| Page 4: [2] Deleted | User68 | 12/1/2021 12:11:00 PM |
|---|---|---|

Հոդված 28.1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցումը

1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցումը կարող է նշանակվել մեկ ամսից մինչև վեց ամիս ժամկետով:

| Page 10: [3] Deleted | User68 | 12/1/2021 10:56:00 AM |
|---|---|---|

Հոդված 129.3 Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը

1. Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը, այսինքն՝ սույն օրենսգրքի 123.3-րդ հոդվածի 1-ին, 123.5-րդ հոդվածի 1-ին, 1.1-ին, 5-րդ, 124-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ, 18-րդ, 21-23-րդ, 26-րդ, 124.3-րդ հոդվածի 1-ին, 124.4-րդ հոդվածի 2-4-րդ, 124.6-րդ հոդվածի 1-ին, 126-րդ հոդվածի 1-ին, 135.2-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված արարք կատարելը, եթե այդ իրավախախտման համար նախատեսված տուգանային միավորի և տվյալ տարում վարորդի նկատմամբ կիրառված տուգանային միավորների հանրագումարը կազմում է 9 կամ ավելի միավոր՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում՝ վեց ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով:

| Page 11: [4] Deleted | User68 | 12/1/2021 10:58:00 AM |
|---|---|---|

ԳԼՈՒԽ 25.1

*(գլուխը լրաց. 09.12.19 ՀՕ-300-Ն)*

ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐՈՒՅԹԸ

Հոդված 304.1. Տուգանային միավոր կիրառելու մասին որոշումը կատարելու կարգը

1. Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նշանակելու մասին որոշումն ի կատար են ածում սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ոստիկանության պաշտոնատար անձինք՝ վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանում տուգանային միավորների չափի մասին տեղեկատվությունը մուտքագրելու միջոցով:

Հոդված 304.2. Տվյալ տարում տրված միավորները մասնակիորեն վերականգնելը

1. Տվյալ տարում տրված միավորների մնացորդը 3 և պակաս լինելու դեպքում անձն իր ցանկությամբ կարող է հանձնել վարորդական վկայական ստանալու տեսական քննություն:

2. Տեսական քննությունը դրական հանձնելու դեպքում տվյալ տարում նվազեցված միավորներից վերականգնվում է 2 միավոր:

3. Միավորները վերականգնելու նպատակով անձը կարող է քննություն հանձնել տվյալ տարում միայն մեկ անգամ:

| Page 12: [5] Deleted | Room213-1 | 12/6/2021 4:38:00 PM |
|---|---|---|

Հոդված 317. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու ժամկետի կրճատման հիմքն ու կարգը

Հոդված 317. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու ժամկետի կրճատման հիմքն ու կարգը

*(վերնագիրը փոփ. 09.12.19 ՀՕ-300-Ն)*

*(մասն ուժը կորցրել է 09.12.19 ՀՕ-300-Ն)*

Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետի առնվազն կեսն անցնելուց հետո անձն իր ցանկությամբ կարող է հանձնել վարորդական վկայական ստանալու տեսական քննություն: Տեսական քննությունը դրական հանձնելու դեպքում անձի՝ տրանսպորտային միջոցներ վարելու կասեցված իրավունքը վերականգնվում է:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

*Նախագծի ընդունման վերաբերյալ*

**Նախագծի համառոտ նկարագրությունը.**

Նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (Օրենսգրքի) այն դրույթները, որոնցով տուգանային միավոր, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում է կիրառվում ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ կատարած անձանց նկատմամբ:

**Նախագծի ընդունման անհրաժեշտությունը.**

**Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝** «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական** պետություն է»:

Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝

**«1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:**

**2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:**

**3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:»**

**Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ն մասի համաձայն՝** «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:»

**Սահմանադրության 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** «Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:»

Այս՝ «ne bis in idem» սկզբունքը ամրագրված է ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ, այլև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետով և «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածով, ընդ որում՝ լինելով ինքնավար տերմին, «դատվել» եզրույթը մեկնաբանվում է ոչ միայն քրեական, այլև որպես ցանկացած տեսակի պատասխանատվություն:

Կրկին դատվելու արգելքը իր բովանդակությամբ (մեկնաբանմամբ) ենթադրում է պետության պարտականությունը՝ նույն արարքի համար անձին կրկին անգամ պատժելը, դատելը և քրեական հետապնդման ենթարկելը բացառելը: Իր սահմանադրաիրավական բովանդակությամբ՝ այդ սկզբունքի հիմքում (քրեաիրավական իմաստով) դրված է այն գաղափարը, որ ոչ ոք չի կարող նույն արարքի համար կրկին դատվել: Այդ սկզբունքը նաև բացառում է միևնույն հանցագործության որակումը քրեական օրենսգրքի մեկից ավելի հոդվածներով, արգելում է նաև միևնույն հանգամանքը հաշվի առնել ինչպես հանցանքը որակելիս, այնպես էլ պատժի տեսակն ու չափն ընտրելիս: Այսպիսով, նախկինում հանցանք կատարած լինելու փաստը, եթե անձը դրա համար արդեն դատվել է, չի կարող նրա հետագա վարքագծի քրեաիրավական գնահատականի հիմք հանդիսանալ, բացառությամբ այն դեպքերի, երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ

քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել արդյունքի վրա: Կրկին դատվելու անթույլատրելիության պահանջը կիրառելի է նաև վարչաիրավական փոխհարաբերություններում: Առաջարկվող փոփոխությամբ լուծվում է տրվում նաև հենց նշված խնդրին, քանի որ վարչաիրավական փոխհարաբերություններում առաջանում է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության պահանջի խախտումը: Ի թիվս այլի նշված սկզբունքը հստակ ամրագրվել է նաև սահմանադրական արդարադատության շրջանակներում (ՍԴՈ-1139) և ՄԻԵԴ նախադեպային իրավունքում: Նման մեկնաբանումը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասից, որի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:» Հենց այս հոդվածի և դրա մեկնաբանման լույսի ներքո էլ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝մեկ վարչական իրավախախտման համար կարող է նշանակվել հիմնական կամ հիմնական ու լրացուցիչ տույժ:

Ընդ որում՝վրա հասնող պատասխանատվության հիմնական կամ լրացուցիչ համարելու և միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվությունը բացառելու նպատակով անհրաժեշտ է ոչ միայն դիտարկել պատասխանատվությունը ֆորմալ առումով, այլև ուշադրություն դարձնել նաև դրա փաստացի հանգամանքներին՝ տվյալ դեպքում փաստացի նույն արարքը կատարելուն:

2019թ դեկտեմբերի 9-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-300-Ն օրենքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում ներդրվել է տուգանային համակարգը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների վարելու իրավունքի կասեցման կամ դրանից առհասարակ զրկելու հնարավորություն:

Օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ Տուգանային միավորը, առարկաները հատուցմամբ վերցնելը և բռնագրավումը կարող են կիրառվել ինչպես իբրև հիմնական, այնպես էլ իբրև լրացուցիչ վարչական տույժեր. սույն օրենսգրքի 23 հոդվածի առաջին մասում թվարկված մյուս վարչական տույժերը կարող են կիրառվել միայն որպես հիմնական տույժեր:

Մեկ վարչական իրավախախտման համար կարող է նշանակվել հիմնական կամ հիմնական ու լրացուցիչ տույժ»: Վերոգրյալից հետևում է, որ տուգանային միավորի կիրառումը կարող է համարվել թե՛ հիմնական, թե՛ լրացուցիչ տույժ:

Օրենսգրքի 129.3 հոդվածի համաձայն՝ **Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը մի դեպքում առաջացնում է** տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում՝ վեց ամիս ժամկետով, եթե թայդ իրավախախտման համար նախատեսված տուգանային միավորի և տվյալ տարում վարորդի նկատմամբ կիրառված տուգանային միավորների հանրագումարը կազմում է 9 կամ ավելի միավոր, իսկ եթե տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը, այսինքն՝ սույն օրենսգրքի 123.3-րդ հոդվածի 1-ին, 123.5-րդ հոդվածի 1-ին, 1.1-ին, 5-րդ, 124-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ, 18-րդ, 21-23-րդ, 26-րդ, 124.3-րդ հոդվածի 1-ին, 124.4-րդ հոդվածի 2-4-րդ, 124.6-րդ հոդվածի 1-ին, 126-րդ հոդվածի 1-ին, 135.2-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված արարք կատարելը

9 կամ ավելի հանրագումարային միավորի դեպքում ընդհանրապես առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով:

Վերոգրյալի հիման վրա, փաստորեն ստացվում է, որ անձը, ով արդեն իսկ վարչական պատասխանատվության էր ենթարկվել օրենսգրքի 123.3-րդ հոդվածի 1-ին, 123.5-րդ հոդվածի 1-ին, 1.1-ին, 5-րդ, 124-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ, 18-րդ, 21-23-րդ, 26-րդ, 124.3-րդ հոդվածի 1-ին, 124.4-րդ հոդվածի 2-4-րդ, 124.6-րդ հոդվածի 1-ին, 126-րդ հոդվածի 1-ին, 135.2-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով կամ դրանցից որևէ մեկով նախատեսված արարք կատարելու համար, կրկին անգամ ենթարկվում է վարչական պատասխանատվության, որը, ընդ որում, ավելի խիստ է, քան առաջնայինը՝զրկվելով տրանսպորտային միջոց վարելու հնարավորությունից, որը արտահայտվում է իրավունքի կասեցմամբ կամ զրկմամբ:

**Տվյալ դեպքերում առկա կրկնակի պատասխանատվության կիրառումը ապացուցվում է այն հանգամանքով, որ որ անձի նկատմամբ 129.3-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված պատասխանատվությունը՝տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցումը կամ դրանից զրկելը վրա է հասնում ոչ թե նոր արարքի, այլև արդեն իսկ կատարված արարքի համար, որի մասով զանցաքը կատարած անձը կրել է պատասխանատվություն:**

Նման ՝ Սահմանադրությանը առերևույթ հակասող և պատասխանատվություն նախատեսող կարգավորումները կարող են հանգեցնել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների անհամաչափ սահմանափակման կամ առհասարակ խախտման, ինչը անընդունելի է ժողովրդավարական հասարակությունների կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է ընդունել սույն օրենքի նախագիծը:

**Նախագծի ընդունման նպատակը.**

Նախագծի ընդունման նպատակն է բացառել անձի նկատմամբ նույն արարքի համար վրա կրկնակի պատասխանատվությունը: